«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 9-րդ բ ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մանուկյան Անի Աշոտի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 – 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին . 9-րդ բ դասարանում սովորում են 34 աշակերտ, որից 16 աղջիկ, 18 տղա: Դասարանում իշխում է ընկերասիրությունը, հանդուրժողականությունը,ներողամտությունը: Առաջացող խնդիրներին ցուցաբերում են համաչափ վերաբերմունք: Դասրարանի ավագ է ընտրվել Մուսինյան Էդմոնդը, իսկ օգնականներ՝ Ալոյան Լիլիթ, Ջումայան Արտյոմ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում. 2023-2024 ուստարվա առաջնային նպատակը ստեղծված բարոյահոգեբանական, ընկերական մթնոլորտի պահպանումը և առավել ամրապնդումն է: Անհրաժեշտ է աղապտացնել երեխաներին իրենց նոր դասընկերներին ՝ զարգացնելով հանդուրժողականությունը և հոգատարությունը : Իրականացնել ուսումնադաստիարակչական տարբեր աշխատանքներ՝ մրցույթներ, խաղեր, էքսկուրսիաներ:

1 .Հայեցի դաստիարակություն. Հայեցի դաստիարակությունը շատ կարևոր է, որովհետև աշակերտները մարդուն պետք է գնահատեն ոչ միայն ըստ արժեքների , այլ որպես հոգևոր լավագույն արժեքներով օժտված անհատի: Աշակերտներին դաստիարակել քրիստոնեական ոգով, լսել ընթերցումներ Աստվածաշնչից, այցելել եկեղեցիներ:

2. Հոգևոր դաստիարակություն. Հնարավորության սահմաններում կազմակերպել այցելություններ դեպի հոգևոր արժեք ունեցող վայրեր, զարգացնել հոգևոր արժեքները և մշակույթը պահելու գիտակցությունը:

3.Գեղագիտական դաստիարակություն. Գեղագիտական դերը կազմում է մարդու զարգացվածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ- բնություն կապը: Նպաստում է սովորողների՝ գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.Ռազմա - հայրենասիրական դերը ևս շատ կարևոր է, ուստի պետք է բարձր ու կայուն հիմքերի վրա դրվի: Կազմակերպել զրույցներ, միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների ռազմա-հայրենասիրական դրսևորման բարձրացմանը:

5.Ֆիզիկական դաստիարակություն. Սովորողը պետք է իմանա, որ առողջ հոգին պետք է լինի առողջ մարմնում: Դրա համար հարկավոր է կազմակերպել տարբեր բնույթի սպորտային միջոցառումներ, որոնք կնպաստեն ռազմա-հայրոնասիրական դրսևորման բարձրացմանը:

6.Աշխատանքային դաստիարակություն. Սովորողի մեջ սեր առաջացնել դեպի աշխատանքը, որը սկսվում է դասարանից, տնից ու բակից: Ակտիվ մասնակցություն դրսևորել դասարանի գույքի վերանորոգմանը, աշակերտներին մասնակից դարձնել ծառատունկին,դպրոցում կատարվող աշխատանքին:

7.Բնապահպանական դաստիարակություն. Սովորողների գիտակցությանը պետք է հասցնել այն փաստը,որ առանց բնության ոչ ոք և ոչինչ գոյություն չի ունենա: Մենք ևս բնության մի մասնիկ ենք, հետևաբար հոգատար լինենք բնության նկատմամբ:

8.Դպրոց-ընտանիք կապը. Դաստիարակչական աշխատանքի հաջողությունը մեծ չափով կախված է դպրոց, ընտանիք կապի սերտ համագործակցությունից: Այդ իսկ պատճառով ապահովել դպրոց-ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	Գիտելիքի օր	Սեպտեմբեր
II	Դասարանական ժողով. ընտրել ավագ, ավագի օգնական	Սեպտեմբեր
III	Անկախության օր	Սեպտեմբեր
IV	Անվտանգ երթևեկություն	Սեպտեմբեր
V	Ինչպես պաշտպանվել վարակներից	Հոկտեմբեր
VI	Ծխախոտի և թմրանյութի վնասները	Հոկտեմբեր
VII	Ինչ է ՁԻԱՀ-ը	Հոկտեմբեր
VIII	Տարերային և բնական աղետներ	Նոյեմբեր
IX	Ինչ է իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության օր	Նոյեմբեր
X	Առաջին բուժօգնություն	Նոյեմբեր
XI	Ինչպես հասնել հաջողության	Նոյեմբեր
XII	Սպիտակի երկրաշարժ	Դեկտեմբեր
XIII	Ինչպես հասնել հաջողության	Դեկտեմբեր
XIV	Նրա մասին ով ամեն օր իմ կողքին է	Դեկտեմբեր
XV	Վատ սովորությունների հետևանքները	Դեկտեմբեր
XVI	Ամանոր և Սուրբ Ծնունդ	Հունվար
XVII	Հայոց բանակի օր	Հունվար
XVIII	Սիրո և հավասարության մասին	Հունվար
XIX	Տեառնընդառաջ	Հունվար
XX	Գրքի դերը մարդու կյանքում	Փետրվար
XXI	Կոնֆլիկտ: Ինչպես խուսափել կոնֆլիկտներից	Փետրվար
XXII	Ինչ է քաղպաշտպանությունը	Փետրվար
XXIII	Կանանց միջազգային տոն	Մարտ
XXIV	Հանդուրժողականություն	Մարտ

XXV	Ս.Հարություն կամ Ս.Զատիկ	Մարտ
XXVI	Ծիծաղի և հումորի օր	Մարտ
XXVII	Ավետման և մայրության տոն	Ապրիլ
XXVIII	Հոգեբանի հետ դաս	Ապրիլ
XXIX	Հայոց մեծ եղեռն	Ապրիլ
XXX	Ծուլությունը արատ է	Ապրիլ
XXXI	Ընկերական հարաբերություններ	Մայիս
XXXII	Գեղեցիկ է նա ով...	Մայիս
XXXIII	Հաղթանակների մայիս	Մայիս
XXXIV	Ահա և վերջ	Մայիս

Դասղեկ՝ /_Ա. Մանուկյան_/